



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝
«ԲԱՐՁՐԱՀԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ
«08» 06 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 55

Ձեռնարկողը՝

«ՀԵՂԱՆԻ ԳԻՆՈՒ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ
«Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան 9

Գործունեությունը՝

Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1PC հորադրանցքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեպահություն

«Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝

Դանիկ

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՌԵՎԱՆ

թիվ ԲՓ 55

«08» 06 2017թ.

ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ադրանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1PC հորատանցքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Զեռնարկող՝

Ներկայացված նյութեր՝

Գործում ենության կատեգորիա՝

Տեղադրման վայրը՝

«Իջևանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ և կից

փաստաթղթեր

«Ա»

ՀՀ Տավուշի մարզ

Ներքին Ադրանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Երևան քաղաքի 157.0կմ դեպի հյուսիս-արևելք, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում՝ Իջևան քաղաքի 13.0կմ դեպի հյուսիս, Ներքին Ադրան (Ակնադրյուր) և Աշաջուր գյուղերի միջև:

Ըսկերության կողմից պահանջվող ջրաքանակը կազմում է 1.0լ/վրկ կամ 31500.0 մ³/տարի:

Ըսկերությունը ստանալով Ներքին Ադրանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման իրավունքն՝ արդյունաբերական (շաղման) համար և իրականացնելով այն կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի մի քանի տասնյակ աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի սահմանամերձ Տավուշի մարզի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

1981-1984թ.-ին <Հայզենկապտաժմինվոդ> Հայկական հիդրոերկրաբանական արտադրական վարչության կողմից Ներքին Ադրանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում կատարվել են մանրակրկիտ հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքներ, որի ժամանակ հանքավայրի տարածքում հորատվել է 32 հորատանցք: Աշխատանքների արդյունքում երեք հորատանցքերով հաշվարկվել և ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից 31.10.1984թ.-ի դրությամբ (արձանագրություն թիվ 9675, 22.02.1985թ.) հաստատվել են ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարներ, այդ թվում՝ Հանքային ջրի պաշարներ՝

1PC հորատանցքով – 4.0 լ/վրկ կամ 345.6 մ³/օր, ըստ B կարգի,
8/81 հորատանցքով – 2.5 լ/վրկ կամ 216.0 մ³/օր, ըստ B կարգի,

Արքայի մեջ օրինակ



Հ. Շահումյան

20/81 հորատանցքով – 1.2 լ/վրկ կամ 103.7 մ³/օր, ըստ Յ կարգի,
Հնդամենք՝ 7.7 լ/վրկ կամ 665.3 մ³/օր

1. Ազատ ածխաթթու գազի պաշարները՝

1PC հորատանցքով – 1.6 գ/լ կամ 0.6 տ/օր, ըստ Յ կարգի,

8/81 հորատանցքով – 1.46 գ/լ կամ 0.3 տ/օր, ըստ Յ կարգի,

20/81 հորատանցքով – 1.6 գ/լ կամ 0.2 տ/օր, ըստ Յ կարգի,

Հնդամենք՝ 4.66գ/լ կամ 1.1 տ/օր

Հանքավայրի հանքային ջրերի շահագործողական պաշարները կարող են օգտագործվել 22ալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման համար:

Հանքավայրի հիպոսմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 590-700մ սահմաններում:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակն է Աղստև գետը, որը թափվում է Կուր գետը: Գետը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջի բարձրադիր մասում տեղակայված աղբյուրներից: Իջևանից դեպի հյուսիս Աղստև գետի հովիտը լայնանում է մինչև 300.0մ:

Աղստև գետն ունի բազմաթիվ վտակներ՝ Սպիտակօտր, Սառնաջուր, Ջողագ, Ուրբիջուր, Գետիկ և այլն:

Տարածաշրջանի կլիման բնութագրվում է բազմազանությամբ և ուղղաձիգ գոտիականությամբ:

Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում Իջևան քաղաքը և հանքավայրի տեղամասը ունեն լեռնաանտառային գոտու կլիմային գծեր՝ համեմատաբար զով ձմեռ և չափավոր տաք ամառ: Մթնոլորտային տեղումների բազմամյա միջին տարեկան քանակը կազմում է 594.5 մմ:

Կատարված հորատման և հիդրոերկրաբանական աշխատանքների արդյունքում Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում առանձնացվել են երկու փոխկապակցված քաղցրահամ և հանքային ջրերի ջրատար միջակայքեր, որոնք բնութագրվում են տարբեր հիդրոդինամիկ, հիդրոքիմիական և ջերմաստիճանային ցուցանիշներով և կազմում են միասնական հիդրավիկ համակարգ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերը և ստորերկրյա հանքային ջրերը հանքավայրի տարածքում զարգացած են հիմնականում հանքավայրի հարավ-արևմտյան բլոկում:


Հանքային ջրերի քիմիական կազմի ձևավորումը տեղի է ունենում տեկտոնական խախտման գոտինով վերնթաց հանքային ջրերի հոսքերի և խորասուզվող քաղցրահամ ջրերի խառնվելու արդյունքում:

Հանքային ջրերը ըստ քիմիական կազմի հիդրոկարբոնատ-կալցիում-մագնեզիումային և կալցիում-նատրիումային են 3.4-5.5գ/լ հանքայնացումով և 16.3-17.0°C ջերմաստիճանով: Հորատանցքերի ջրի ծախսերը տատանվում են 1.2-4.0լ/վրկ սահմաններում:

Համաձայն առողջապահության նախարարության կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից 1984թ.-ին տրված Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) հանքային ջրի կոնդիցիայի մասին տեղեկանքի՝ նրանք համարվում են սառը (16.0-17.0°C), սիլիկատային (H_2SiO_3 -20.8-80.0մգ/լ), ածխաթթվային (CO_2 -99.7%), միջին հանքայնացմամբ (3.4-5.5գ/լ), թույլ թթվայինից (pH-6.5-7.0): Ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատային, կալցիում-մագնեզիումային և կալցիում-նատրիումային են: Լուծված CO_2 գազի պարունակությունը կազմում է 1.8-2.2գ/լ, իսկ ազատ CO_2 գազինը՝ 1.5-1.8գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտներից յոդի պարունակությունը կազմում է 0.2-0.5 մգ/լ, բրոմինը՝ 0.5-1.0մգ/լ, պղինձինը՝ 0.01-0.15մգ/լ, մանգանինը՝ 0.15-0.4մգ/լ, երկարինը՝ 1.12-4.8մգ/լ:

Ռադիոակտիվ էլեմենտներից ուրանի պարունակությունը կազմում է $1.3-3.25 \times 10^{-5}$ գ/լ:



Լիթիում, ամոնիում, ստրոնցիում, վանադիում, ցինկ, մոլիբդեն, կապար, արսեն, արծաթ, ֆոտոր, ալյումինիում, նիկել, քրոմ, ազոտի միացումներ հանքային ջրում հայտնաբերված չեն, կամ դրանց պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոր է:

Հանքավայրի ջրերն իրենց քիմիական կազմով և առանձնահատկություններով մոտ են <Դարասուն> հանքային ջրերի տիպին, և կարելի է հաջողությամբ օգտագործել որպես բուժիչ-խմելու ջուր, ինչպես շշալցման, այնպես էլ հանքաջրաբուժական նպատակով:

Զրի քիմիական անալիզները կատարվել են <Հայզեռկապտամինվոդ> Հայկական հիդրոերկրաբանական արտադրական վարչության լաբորատորիայում, իսկ հսկիչ անալիզները՝ Երկրաբանական վարչության <Կենտրոնական>, այժմ <Անալիտիկ> և ՀՀ առողջապահության նախարարության <Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ> լաբորատորիաներում, որի արդյունքում տրվել է եզրակացություն՝ հանքային ջրերի բուժիչ արժեքի և օգտագործման նպատակահարմարության վերաբերյալ:

Ստորերկրյա ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ:

Հանքավայրում գոյություն ունի միասնական հիդրավլիկ համակարգ՝ ստորերկրյա ջրեր կտրած բոլոր հորատանցքերը փոխկապակցված են:

Բոլոր հորատանցքերում առաջին ջրատար գոտու ջրերը մեկուսացվել են ամրակապող պողպատյա խողովակներով և կատարվել է արտախողովակային տարածքի ցեմենտացիա:

Ներքին Աղդանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի մանրակրկիտ հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքների ավարտից հետո բոլոր հորատանցքերը լիկվիդացվել են, բացի 1PC, 8/81 և 20/81 հորատանցքերից, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի հանքային ջրերի շահագործողական պաշարները:

ԽՍՀՄ տարիներին 1PC հորատանցքից կատարվել է հանքային ջրի արդյունահանում: Այդ ժամանակ հորատանցքը կահավորվել է 108մմ տրամագծի չժանգությունունու (խմելու որակի) խողովակաշարով:

Թիվ 1PC հորատանցքը գտնվում է Ակնադրյուր գյուղից դեպի հյուսիս, Քուցաղի բնավայրում, 8/81 հորատանցքից 120.0մ դեպի հյուսիս-արևմուտք:

Հորատանցքի աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնության - $40^{\circ} 58' 16.64''$
- արևելյան երկայնության - $45^{\circ} 09' 41.18''$

Հորատանցքի բացարձակ բարձրությունը – 648.0մ:

Նկատի ունենալով, որ անձրևների ժամանակ և ձմռան սեզոնին դեպի հորատանցք տանող ձանապարհը դառնում է անանցանելի, նախատեսվում է ջրհավաք հորատանցքից՝ 2 կամ 3 դույմ տրամագծի պլաստմասսե (խմելու որակի) խողովակաշարով երկրի մակերեսով հանքային ջուրը տեղափոխել լիցքավորման համար հատուկ կահավորված տարածք (մոտ 0.5կմ), որտեղից ավտոմոբիլ-ցիստենոնվ (խմելու որակի) հանքային ջուրը կտեղափոխվի գործարանի շշալցման արտադրամաս, որտեղ և կկատարվի հանքային ջրի շշալցումը:

Հեռավորությունը հանքավայրից մինչև գործարանի տարածք կազմում է 18.0կմ:

Նախատեսվում է գործարանի շշալցման արտադրամասում տեղադրել երկու հատ շշալցման հոսքագիծ (պլաստմաս և ապակյա տարաներում շշալցման համար), որի յուրաքանչյուրի արտադրողականությունը կազմվի համապատասխանաբար՝ 1500 հատ 1.0 լիտրանոց տարողությամբ շիշ մեկ ժամում:

Ներքին Աղդանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքավայրի թիվ 1PC հորատանցքի հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար <Իջևանի գինու,



կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ նախատեսում է իրականացնել 1PC հորատանցքի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացահայտ մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք, ջրհավաք 1PC հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորել համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ջրհավաք 1PC հորատանցքը կառուցապատել սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիով, ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում և տեղադրում, լիցքավորման տարածքի ցանկապատում, կահավորում և այլ անհրաժեշտ աշխատանքներ:

Ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ նախատեսում է իրականացնել նաև մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն ջրի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրծաս քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրհավաք հորատանցքի բերանի փականը կփակվի և կկապարակնքվի: Դրանով իսկ հանքավայրը կկոնսերվացվի:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում, պարբերաբ հանդիպելու Աշաջուր համայնքի դեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե: Տարեկան կտրվածքով նախատեսվում է Աշաջուր համայնքի բյուջե ներդնել 500 000 դրամ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպահապանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի են առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանքային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացի իրականացման ընթացքում պարզվել է, որ ՀՀ Տակուշի մարզի Ներքին Ադրանի (Ակնադրյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1PC հորատանցքի տարածքը սեփականության իրավունքով պատկանում է <<Սլովակիա>> ՍՊԸ-ին, որի ներկայացուցիչը մասնակցում էր չորրող հանքային քննարկմանը և դեմ արտահայտվեց նախատեսվող գործունեությանը: Քննարկման ընթացքում հնչեցին իրարամերժ կարծիքներ, որոնք վերաբերվում էին ընդերքի տեղամասի հնարավոր տրամադրմանը՝ «Իջևանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ին, և <<Սլովակիա>> ՍՊԸ-ին Աշաջուր համայնքի դեկավարի 09.06.2015թ թիվ 51-Ա որոշմամբ իրականացրած այդ տարածքի վաճառքին:



Միաժամանակ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի (21.06.2014թ., ՀՕ-110-Ն) 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան նախագծային փաթեթում առկա է տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնությունը նախատեսվող գործունեություն վերաբերյալ: Համաձայն <<Ընդէրքի մասին>> ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության ընդէրքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոնների արդյունահանման նպատակներով: Ընդ որում, ընդէրքի տեղամասերը չեն կարող լինել առքուվաճառքի, գրավի առարկա կամ օտարվել այլ ձևով:

Փորձաքննական պահանջներ

- Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
 - Հանքարդյունահանուման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետնախազգային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Իջևանի զինու կոյակի գործարան>> ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ադրբանի (Ակնաղբյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1PC հորատանցքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետն



Զ. Զուռնայլան